ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 291

23 հոկտեմբեր 2017թ.

ԱՐԱՔՍՅԱ ՆՈՐԻԿԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 8-րդ կետի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշումով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 74-Ն, 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 55 որոշումները, ինչպես նաև 2014 թվականի դեկտեմբերի 03-ի և 2015 թվականի հունվարի 23-ի <<Աճուրդը և կրկնաճուրդը չկայացած համարելու մասին>> արձանագրությունները և Արաքսյա Նորիկի Թադևոսյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արաքսյա Նորիկի Թադևոսյանին ուղղակի վաճառքով օտարել քաղաք Ծաղկաձոր,Սարալանջի փողոց, թիվ 6 հասցեում գտնվող, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին չդասվող, համայնքի սեփականություն համարվող, հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված հողերից 0,062 հա մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 30092014-07-0038) մեկնարկային գնով՝2 804 880(երկու միլիոն ութ հարյուր չորս հազար ութ հարյուր ութսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Արաքսյա Նորիկի Թադևոսյանի հետ կնքել հողի օտարման պայմանագիր:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 292

24 հոկտեմբեր 2017թ.

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ծաղկաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 13032015-07-0045) 0.1 հա ընդհանուր մակերեսով Ծաղկաձոր համայնք, Տանձաղբյուրի փողոց, թիվ 6/5 հասցեում գտնվող հողամասի և 0.05 հա ընհանուր մակերեսով (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 27092017-07-0042) Ծաղկաձոր համայնք, Տանձաղբյուրի փողոց, թիվ 6/4 հասցեում գտնվող հողամասի միավորման հետևանքով առաջացած 0.15 հա մակերեսով հողամասի հասցեն թողնել նույնը՝ Կոտայքի մարզ, քաղաք Ծաղկաձոր,Տանձաղբյուրի փողոց թիվ 6/5:

2. Կոտայքի մարզ,քաղաք Ծաղկաձոր,Տանձաղբյուրի փողոց թիվ 6/4 հասցեն համարել չեղյալ:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 293

24 հոկտեմբեր 2017թ.

ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի օգոստոսի 11-ի N 1384 որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Համայնքի ղեկավարի տեղակալ Գարիկ Հայրապետյանին տրամադրել 2016 թվականի վճարովի արձակուրդից 10 աշխատանքային օր՝ 2017 թվականի հոկտեմբերի 24-ից մինչև 2017 թվականի նոյեմբերի 06-ը ներառյալ:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 294

27 հոկտեմբեր 2017թ.

ՀԱՄԼԵՏ ՌԱԶՄԻԿԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Համլետ Ռազմիկի Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2600735, տրված 2008 թվականի օգոստոսի 22-ին) 0.002 հա ընդհանուր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների նրբանցք, թիվ 21:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ